ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՏԱՆԸ

ԼՎԱՑԵՔ ՁԵՐ ՁԵՌՔԵՐԸ ԼԱՎ ԵՎ ՀԱՃԱԽ

- Հաճախակի լվացեք ձեռքերը օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան:
- Եթե ձեռքի տակ չունեք ջուր և օճառ, ապա օգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ախտահանիչ նյութ:
- Ձեռքերը լվացեք աղբի դույլը դատարկելուց հետո, օգտագործված անձեռոցիկների ձեռք տալուց և նմանատիպ դեպքերից հետո:

ԿԱՐԴԱՑԵՔ ՄԱՔՐՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԻՏԱԿՆԵՐԸ

- Հետևեք ապրանքների պիտակների վրա նշված ցուցումներին, ներառյալ՝ ձեռնոցներ հագնելը և լավ օդափոխությունը:
- Օգտագործեք տան համար նախատեսված մաքրող ապրանքներ և շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (EPA) կողմից գրանցված ախտահանիչներ, որոնք կիրառելի են տվյալ մակերեսի համար:
- Որպեսզի իմանաք, թե արդյոք տվյալ ապրանքը ոչնչացնում է վիրուսները, կարդացեք ապրանքի պիտակը, զանգահարեք պիտակի վրայի 1-800 համարով կամ այցելեք www.epa.gov կայքը:
- Սպիտակեցնող լուծույթը (քլոր) նույնպես կարելի է օգտագործել որպես ախտահանիչ՝ խառնելով 4 ճաշի գդալ սպիտակեցնող հեղուկը 4 բաժակ ջրի հետ, կամ ավելի մեծ քանակի համար՝ $^1/_3$ բաժակ սպիտակեցնող հեղուկը 1 գալոն (16 բաժակ) ջրի հետ:

ՄԱՔՐԵՔ ԵՎ ԱԽՏԱՀԱՆԵՔ ՀԱՃԱԽԱԿԻ ՁԵՌՔ ՏՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

Կարծր (Ոչ-ծակոտկեն) մակերեսներ

Օր.՝ հաճախակի ձեռք տրվող մակերեսները, ինչպիսիք են՝ սեղանները, դռների բռնակները, վանդակաճաղերը, բաղնիքի հարմարանքները, լույսի անջատիչները, զուգարանները, հեռախոսները, ստեղնաշարերը, հեռակառավարման վահանակները, պլանշետները և անկողնուն կից սեղանիկները:

- Մաքրեք մակերեսները և իրերը՝ հեռացնելու համար տեսանելի կեղտը և ախտահանելու դրանք՝ սպանելով մանրէները: Ախտահանիչներ օգտագործելիս համոզվեք, որ մակերեսը թաց է մնում առնվազն 10 րոպե, որից հետո մաքրեք ջրով, հատկապես այն տեղերում, որտեղ սննդի հետ շփում կա: Թողեք չորանա:
- Էլեկտրական սարքերի վրա ախտահանող անձեռոցիկներ օգտագործելիս ուշադիր կարդացեք ցուցումները՝ համոզվելու, որ դրանք կդիմանան մի քանի անգամ թաց անձեռոցիկով մաքրելուն և որոշ տևողությամբ թաց մնալուն:

Փափուկ (ծակոտկեն) մակերեսներ

Օր.՝ սրբիչներ, անկողին, հագուստ և փափուկ խաղալիքներ:

- Լվացեք տաք ջրով՝ օգտագործելով տնային օգտագործման լվացքի նյութ և չորացրեք բարձր ջերմաստիճանի տակ:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

CDC ուղեցույցը կորոնավիրուս 2019 հիվանդությամբ գրանցված կամ կասկածվող տների մաքրման և ախտահանման համար (սեղմեք այս տեղեկատվությանը):
https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/home/cleaning-disinfection.html#disinfect

Հանրային առողջապահական ուղեցույց՝ ձեռքերը ճիշտ լվալու վերաբերյալ :
http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/ (սեղմեք ձեռքերը լվանալու տեղեկատվությանը)

County of Los Angeles Public Health